



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2019 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-298-26.09.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող) նշանակելու մասին» N 1634 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱԶԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-298-26.09.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ եթե ֆիզիկական անձն ապահովադիր է և հատուցման գումարն ստանում է ապահովագրության շահառու հանդիսացող բանկի կամ վարկային կազմակերպության կողմից, ապա այդ դեպքում ֆիզիկական անձի կողմից ստացվող գումարները եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով համարվում են նվազեցվող եկամուտներ:

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ գործնականում առկա են դեպքեր, երբ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի գրավ հանդիսացող անշարժ և շարժական գույքի ապահովագրության շրջանակներում ապահովագրական դեպք տեղի ունենալու ժամանակ ապահովագրական հատուցումն ստանում է շահառու հանդիսացող բանկը կամ վարկային կազմակերպությունը, սակայն հետագայում ապահովագրական հատուցումը փոխանցվում է վարկառու և ապահովադիր հանդիսացող ֆիզիկական անձին: Այս դեպքում ֆիզիկական անձանց ստացված գումարները հարկվում են եկամտային հարկով:

Շարադրվածի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում ապահովագրական հատուցումները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող հատուցումների (այդ թվում՝ կենսաթոշակների):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝

983.1-ին հոդվածի՝

ա. 1-ին մասի համաձայն՝ ապահովադիրն ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած անձն է,

բ. 3-րդ մասի համաձայն՝ շահառուն ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցումն ստանալու իրավունք ունեցող անձն է,

գ. 6-րդ մասի համաձայն՝ ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովադրին կամ շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով.

226-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավ) գրավատուի գույքի նկատմամբ գրավատուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավատուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար,

բ. 4-րդ մասի համաձայն՝ գրավատուն իրավունք ունի բավարարում ստանալու գրավ դրված գույքի կորստի կամ վնասվածքների ապահովագրական հատուցումից՝ անկախ այն բանից, թե այն ում օգտին է ապահովագրված.

996-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գույքի ապահովագրության պայմանագրով մի կողմը (ապահովագրողը) պարտավորվում է պայմանագրով պայմանավորված վճարի (ապահովագրավճարի) դիմաց պայմանագրով նախատեսված դեպքը (ապահովագրական պատահարը) տեղի ունենալիս մյուս կողմին (ապահովադրին) կամ այլ անձի, ում օգտին կնքվել է պայմանագիրը (շահառուին), հատուցել ապահովագրված գույքին այդ դեպքի հետևանքով պատճառված կամ ապահովադրի այլ գույքային շահերի հետ կապված վնասները (ապահովագրական հատուցումը)՝ պայմանագրով որոշված գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում: Գույքի ապահովագրության պայմանագրով գույքը կարող է ապահովագրվել հոգուտ այն անձի (ապահովադրի կամ շահառուի), որն օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի: Ապահովադրի կամ շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված գույքի ապահովագրության պայմանագիրն անվավեր է.

1012-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասի համաձայն՝ ապահովադիրն իրավունք ունի ապահովագրության պայմանագիր կնքելու հոգուտ այլ անձի՝ շահառուի: Ապահովադիրն իրավունք ունի ապահովագրության պայմանագրում նշված շահառուին փոխարինելու այլ անձով՝ դրա մասին գրավոր ծանուցելով ապահովագրողին,

բ. 2-րդ մասի համաձայն՝ շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով՝ այն բանից հետո, երբ նա ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի առաջին պարբերության 15-րդ կետի համաձայն՝ ապահովադիր է համարվում ապահովագրության պայմանագրի այն կողմը, որին կամ որի մատնանշած անձին (շահառու) ապահովագրողը պարտավորվում է հատուցել ապահովագրության պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու ուժով՝ ըստ ապահովագրության պայմանագրի պայմանների:

Շարադրվածի կապակցությամբ հայտնում ենք, որ գրավի առարկա հանդիսացող գույքի ապահովագրության դեպքում շահառու կարող է լինել գրավառուն, քանի որ ապահովագրության պայմանագրի համաձայն՝ նշված գույքի պահպանման շահ ունի գրավառուն: Եթե անգամ ապահովագրության պայմանագրի համաձայն շահառուն գրավառուն չէ, մինևույն է, գրավառուն իրավունք ունի բավարարում ստանալու գրավ դրված գույքի կորստի կամ վնասվածքների ապահովագրական հատուցումից՝ անկախ այն բանից, թե այն ում օգտին է ապահովագրված: Ընդ որում, գրավ դրված գույքի կորստի կամ վնասվածքների ապահովագրական հատուցումից ստացված բավարարումը վերաբերում է միայն գույքի գրավով ապահովված պարտավորությանը գումարն ուղղելուն, այլ ոչ ապահովագրական հատուցումն ստանալուն և ապահովադիրին փոխանցելուն:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ապահովագրական հատուցում ստանալու իրավունքը վերապահված է ապահովադիրին կամ շահառուին: Ընդ որում, եթե առկա է պայմանագրով մատնանշված անձ (շահառու), ապա հատուցման գումարն ստանալու է շահառուն: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է, որ ապահովագրական հատուցում է ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովադիրին կամ շահառուին վճարման ենթակա գումարը՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով: Ինչ վերաբերում է նախագծի հեղինակների նշած այն դեպքին, երբ ապահովագրողը հատուցումն իրականացնում է

հոգուտ գրավառուի, իսկ գրավառուն, մասնավորապես՝ բանկը կամ վարկային կազմակերպությունը, հատուցման գումարը փոխանցում է ապահովադրին, որի արդյունքում փոխանցված գումարը չի համարվում ապահովագրական հատուցում, և որից եկամտային հարկ է գանձվում, ապա հարկ ենք համարում նշել, որ ապահովագրության շահառու հանդիսացող բանկից կամ վարկային կազմակերպությունից ապահովադրի ստացած հատուցման գումարը, համաձայն գործող օրենսդրության, չի կարող դիտարկվել որպես ապահովագրական հատուցում:

Ուստի, թեև ընդհանուր առմամբ խնդրո առարկա դեպքերում ֆիզիկական անձանց կողմից ստացվող եկամուտները եկամտային հարկով հարկման առումով նվազեցվող եկամուտ համարելու վերաբերյալ առաջարկությունն ընդունելի է, սակայն, հաշվի առնելով այն, որ ապահովագրության շահառու հանդիսացող բանկից կամ վարկային կազմակերպությունից ապահովադրի ստացած հատուցման գումարը, գործող օրենսդրության համաձայն, չի կարող դիտարկվել որպես ապահովագրական հատուցում, օրենքների միջև հակասությունների առաջացումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան փոփոխությունները կատարել համակարգային՝ փաթեթում ներառելով նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան հոդվածներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծեր:

Մյուս կողմից, գործող կարգավորումների կիրառությունը խնդրահարույց իրավիճակների է հանգեցնում նաև այն դեպքերում, երբ ապահովագրական հատուցումները ոչ թե ուղղակիորեն ապահովագրական ընկերություններից, այլ բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստանում են ապահովադիր համարվող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը:

Ուստի, գտնում ենք, որ նախագծի ընդունման հիմնավորմամբ նկարագրված նմանօրինակ խնդիրները համապարփակ ձևով լուծելու համար անհրաժեշտ է նախագծով անդրադառնալ նաև նկարագրված հարաբերությունների կարգավորմանը: Այդ կապակցությամբ, ինչպես արդեն նշվեց, առաջարկում ենք նախագիծը հետագա քննարկումների շրջանակներում համապատասխանաբար լրամշակել՝ փաթեթով անդրադառնալով նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխությունների կատարմանը՝ հստակ ամրագրելով այն մոտեցումը, որ, անկախ նրանից, թե ապահովագրական

հատուցման գումարն ապահովադրին փոխանցվում է ուղղակիորեն ապահովագրական ընկերությունից, թե միջնորդավորված՝ բանկի կամ վարկային կազմակերպության միջոցով, միննույն է, հարաբերությունների բովանդակությունը չի փոփոխվում, և ըստ էության շահառու շարունակում է հանդիսանալ ապահովադիր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 նոյեմբերի 2019 թվականի N 1634 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-322-17.10.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2019 թ. նոյեմբերի 7
Երևան



Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ
8-26.09.2019-ՏՀ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 04-ի հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածը 1-ին մասի 4-րդ կետը «ապահովագրական հատուցումները» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ եթե ֆիզիկական անձը հանդիսանում է ապահովագիր և հատուցման գումարն ստանում է ապահովագրության շահառու հանդիսացող բանկի կամ վարկային կազմակերպության կողմից)» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված են եկամտային հարկի գծով նվազեցվող եկամուտները, որոնց մասով եկամտային հարկ չի գանձվում: Դրանց թվում են ապահովագրական հատուցումները:

Պրակտիկայում առկա է հետևյալ խնդիրը՝ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի գրավ հանդիսացող անշարժ և շարժական գույքի գրավի ապահովագրության ժամանակ շահառու է հանդիսանում բանկը կամ վարկային կազմակերպությունը, իսկ ֆիզիկական անձ վարկառուն հանդիսանում է ապահովադիր:

Ապահովագրական դեպք տեղի ունենալուց հաճախ բանկերը և վարկային կազմակերպությունները որոշում են հատուցման գումարը տրամադրել վարկառուին և ոչ թե ուղղել վարկի մարմանը՝ հաշվի առնելով վնասի փոքր ազդեցությունը գրավի վրա և հաճախորդի կողմից վարկային պարտավորությունների պատճառ կատարումը:

Այս դեպքում, սակայն, հատուցումն ստանում է բանկը, ու գումարը փոխանցվում է վարկառուին և, հետևաբար, ստացված գումարը չի հանդիսանում ապահովագրական հատուցում ֆիզիկական անձի համար, այն ենթակա է լինում հարկման եկամտային հարկով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդիրն իրավական բնույթ է կրում և բովանդակային առումով չկա որևէ տարբերություն, երբ շահառուն հանդիսանում է ֆիզիկական անձ վարկառուն, նպատակահարմար է լրացնել այդ բացը և նվազեցվող եկամուտ համարել նաև այն դեպքերը, երբ ֆիզիկական անձը հանդիսանում է ապահովադիր և հատուցման գումարը ստանում է ապահովագրության շահառու հանդիսացող բանկի կամ վարկային կազմակերպության կողմից: